ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Սիգիշսթի 1

№ 2284-Ա « 09 » հունիսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, Գ.ՋԱՀՈՒԿՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.15/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԵՆ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Կարեն Սերյոժայի Գրիգորյանի (ծնված 03.04.1978թ.) դիմումը: Երևանի Կենտրոն, Գ.Ջահուկյան փողոց հ.15/1 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 224.80քմ, որից 132.3քմ մակերեսով հողամասը՝ Կարեն Սերյոժայի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 27.08.2024թ. հ.27082024-01-0325 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 11.01.2023թ. հ.ԱՏ-11012023-01-0704, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 16.02.2023թ. հ.1315 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 13.03.2025թ. հ.20-Ել-Դ-89678 եզրակացությունը, համաձայն որի Երևանի Կենտրոն, Գ.Ջահուկյան փողոց հ.15/1 տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1.Վերականգնել Երևանի Կենտրոն, Գ.Ջահուկյան փողոց հ.15/1 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Կարեն Սերյոժայի Գրիգորյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 132.3քմ մակերեսով հողամասին կից 92.5քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 92.5քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 10.09.2024թ. հ.204-Ն որոշմամբ հաստատված՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագիծը, ք.Երևան Կենտրոն,

Գ.Ջահուկյան փողոց հ.15/1 հասցեում գտնվող 224.80քմ հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ